

անոր երեք հոգի խնամակալ կարգելով: Խոսմանկալութեան ատեն խորհրդանոցը վճռեց որ Միլան եւ Նաթալի երեք Սերվիայի մէջ ոտք չդնեն, եւ մի եւ նոյն ատեն ռամկավարական արմատականները կառավարութեան սանձն իրենց ձեռքն առնելով այնչափ զօրացան, որ Թագաւորին եւ իշխանութեան ստուերը մինաց, երկիրն ալ յեղափոխութեան մը մէջ կը գտնուէր: Մանուկ Թագաւորն այս տեսնելով անցած տարի Մայր. 19ին յանկարծ ինք զինք չափահաս հրատարակեց, թէպէտ եւ տակաւին տարի մը պէտք էր լեպահաս ըլլալու, խնամակալներն հեռացուց եւ իշխանութիւնը ձեռքն առաւ: Երբ ասով օգուտ մի չեղաւ՝ իր հայրն իրեն կանչեց իրեն խորհրդակից ըլլալու. եւ որովհետեւ պաշտօնեայք եւ խորհրդանոցն ասոր հակառակ ելան, արմատական պաշտօնեաներն արձակեց եւ խորհրդանոցը լուծեց, նոր դահլիճ մը կազմեց, ծնողը տարագիր ընող վճիռը ջնջեց, զանոնք հաշտեցուց եւ նոր սիտոդ մը գումարելով անոնց ամուսնութեան լուծումն անգոր հրատարակել տուաւ: Արմատականներն սկսան ժողովուրդը նոր կառավարութեան դէմ զրգռել, իրենց տագիրները նստեւ Միլանի դէմ՝ շարժարար գրել. եւ երբ ասոնք դատաստանի կանչուեցան՝ վճռաբեկ ատեանը, որուն մէջ արմատականք կը տիրէին, զանոնք անպարտ հրատարակեց եւ Թագաւորին վճիռը ոչինչ: Միանգամայն դաւաճանութիւն մը յայտնուեցաւ Թագաւորական զերդաստանին դէմ, որուն համարշատ մարդիկ քանտարկուեցան: Արմատականաց զօրութիւնն էր 1888ին ռամկավարական սահմանադրութիւնը, որով արմատականք ցմահ տիրած էին ջոլոր ատեաններու մէջ, իրենք վճիռներ կը կորէին եւ Թագաւորին ձեռքերը կը կապէին: Թագաւորին ուրիշ ճար չմտալով այն սահմանադրութիւնն ալ ջնջեց, եւ 1869ի սահմանադրութիւնն առ ժամն նորէն հաստատեց՝ խոստանալով որ քիչ ժամանակէն երկրին յարմար ուրիշ սահմանադրութիւն մը պիտի տայ: Ասով արմատականաց ըռնած ատեանները լուծուեցան, իշխանութիւնը Թագաւորին ձեռքը կենդրոնացաւ՝ խորհրդաւնոցը խորհրդատու ծայն միայն ունե-

նալով: Ժողովուրդը Թագաւորին այս ամէն ըրածներն հանդարտութեամբ ընդունեցաւ, որովհետեւ կողմնակցութեանց զրգռութիւններէն ծանծրացած էր:

Յանկարծադէպ մ'ալ վերջին օրերս Պուլկարիոյ մէջ տեղի ունեցաւ: Ամսոյս 29ին Սթամպուլով պաշտօնէից գահաճեցնիւ իր ջոլոր պաշտօնեաներովը՝ հրատարականը տուաւ իշխանին ձեռքը: Հրատարման պատճառը կը կարծուի որ դահլիճն անդամից մէջ մտած տարածայնութիւն մ'ըլլայ: Ստամպուլովին յաջորդը կը կարծուի ապահովապէս Կրէքով, արտաքին գործոց պաշտօնեայն որուն յանձնեց Փերտիսանդ իշխանն նոր դահլիճն կազմութիւնը:

Պրագիլիայի մէջ Փիեշոթոյ՝ ապրտամբուլութիւնը գապելն ետեւ Փորթուկալի դեսպանին անցագիրը տուաւ, իւր դեսպանը Լիսաբոնէն ետ կանչեց, եւ Փորթուկալի տէրութեան հետ յարաբերութիւնները կտրեց, որովհետեւ անոր նաւերուն մէջ ապաստանած ապստամբներն իրեն շխմեցեց, եւ կասկած կար թէ անոնց սատարութիւն կ'ընէր:



ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

- ՌՍՏՈՒՄԵՆՍԿԻՆ**
 ՄԱՏԵՆԱԳՐԱՆՆԵՐ — Փեթթեւ եւ հին Հայոց ազգայն երգերը. 165:
 ԲԺՇԵՆԿԱՆ — ԺԱ. Ախապասին (ղեղազորութիւն). 170:
 ԼԵՋՈՒՆԱՆՆԵՐ — Հայերէն յատուկ անուանք. 176:
 ՄԱՏԵՆԱՅՕՍԱՆՆԵՐ — Նորագոյն աղբեր Մ. Խորենացոյ. 178:
 ՊԱՏՄԱՆՆԵՐ — Կուլկալի կաթոնիկայ Հայերը. 178:
 — Հունգարահայոց մայրաքաղաքն (Գերլա հայաքաղաքն) ի գիւր եւ ի պատկերս. 183:
ՍՐԱԻԵՍԻՆՍԿԻՆ
 Նորասար անիաքար. (Պատկերազարդ) 187:
 ԳԵՂԱՐՈՒԵՏԱՆՎԱՆ — Արեւմտեան եկեղեցական երաժշտութիւն. 189:
 ԱՐՈՒԵՏԳԻՏԱՆՎԱՆ — Ժամացոյց (Պատկերազարդ). 191:
ՔՍՂԵՔՍԿԻՆ ՅԵՏՈՒԹԻՒՆ. 194:



ՀՐԱՄԱՐՎԱԿՉ ԵՒ ՊԱՏԱՆՈՒՆԱՑՈՒ ԽՄԱՐԱԿՈՒ
Է. ԱՌՓԱՏԷԼ Վ. ՊԱՐԱՆՉ
 Վ Ի Ե Ն Ե Ն . Մ Ի Ի Բ Ր Ի Ե Ն . Ց Գ Ա Ր Ը